ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2023 թվականի N 820

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԾԱՏՈՒՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 49Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՌՈՒԲԵՆ ՋԱՀԱՆԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուբեն Ջահանի Բարսեղյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2050858 վկայականը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ՀՀ կադաստրի կոմիտեի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023DUUEVD) «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված 11.04.2023թ. շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-89/23 Ի եզրակացությունը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ և 17-րդ կետերով, 18-րդ կետի ա) ենթակետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Ծատուրյան փողոց թիվ 49ա հասցեում գտնվող, Ռուբեն Ջահանի Բարսեղյանի սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 25.5քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 21.3քմ) բնակելի տունը:

2. Ռուբեն Ջահանի Բարսեղյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 25.5քմ արտաքին մակերեսով բնակելի տան համար 50210 (հիսուն հազար երկու հարյուր տասը) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Վանաձոր քաղաքի Ծատուրյան փողոց թիվ 49ա հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Ա.Ծատուրյան փողոց թիվ 49/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 29
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2023 թվականի N 821

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱ 53 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՕԼՅԱ ԼԵՎՈՆԻ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Օլյա Լևոնի Քոչարյանի (ծնված՝ 10.08.1937թ.) դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07112022-06-0036 վկայականը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման /89580/ քաղվածքը , ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Տարանջատել Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտա 53 հասցեում գտնվող Օլյա Լևոնի Քոչարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2. Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտա 53 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա) 0.08222հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 172.98քմ շինությունների փոստային հասցեն՝ Վանաձոր Վանաձոր ք., Մարշալ Բաղրամյան պողոտա, 53 բնակելի տուն (հատակագիծ թիվ 1).

բ) 0.00842հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ Վանաձոր Վանաձոր ք., Մարշալ Բաղրամյան պողոտա, 53/4 հողամաս (հատակագիծ թիվ 2):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 29
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2023 թվականի N 822

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ (ՐԱՖՖՈՒ) ՓՈՂՈՑ ԹԻՎ 1/1 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱԳԹԱՂ ԱՆԴՐԵՅԻ ԱՎԱԳՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մագթաղ Անդրեյի Ավագյանի (ծնված՝ 20.10.1956թ.) դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, Վանաձորի համայնքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի տեղեկանքը, 22.02.2023թ. տրված թիվ 746 (նոտարական ակտի կոդ: 741-20230222-88-6697619) հայտարարությունը, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 03.04.2023թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-82/23 Ի եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտե 02.03.2023թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023HNP7UC), ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Ներսիսյան (Ռաֆֆու) փողոց, թիվ 1/1 (պայմանական) հասցեում կառուցված բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 384.0քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1990թ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 384.0քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1990թ.-ից:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Մագթաղ Անդրեյի Ավագյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Ներսիսյան (Ռաֆֆու) փողոց, թիվ 1/1 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի

տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 384.0քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2. Փոխել Վանաձոր քաղաքի Ներսիսյան (Ռաֆֆու) փողոց, թիվ 1/1 (պայմանական) հասցեում գտնվող 0.0384հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր, Վանաձոր ք., Հ.Ներսիսյան փողոց, թիվ 1/8 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 29
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2023 թվականի N 823

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ 21 ՓՈՂ ԹԻՎ 37 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՂՎԱՆ ԳԵՎՈՐԳԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աղվան Գևորգի Վարդանյանի (ծնված՝ 10.05.1932թ.) 04.04.2023թ. թիվ 02/5511 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1917111 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /87940/, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը,եզրակացությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 11.04.2023թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-98/23 Ի եզրակացությունը, 12.04.2023թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023C6RX5T), ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով և 18-րդ կետի ա), դ) ենթակետերով,ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով ,ՀՀ կառավարության 2021թ. ապրիլի 29-ի թիվ 698-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Հաստատել Վանաձոր քաղաքի, Տավրոս 21 փող 37 հասցեում գտնվող Աղվան Գևորգի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող 0.137166 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի պաշտոնակատարի կողմից հաստատված հատակագծի:
2.Ճանաչել օրինական Աղվան Գևորգի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր քաղաքի, Տավրոս 21 փող 37 հասցեում

գտնվող ինքնակամ կառուցված 51.27 քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 44.03քմ) բնակելի նշանակության շինությունները և թվով 4 ինքնակամ ձևափոխությունները:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված 51.27 քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 44.03 քմ) ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար սահմանված վճարը՝ 100960 (հարյուր հազար ինը հարյուր վաթսուն) դրամ գումարը և թվով 4 ինքնակամ ձևափոխությունների օրինականացման համար սահմանված վճարը՝ 7880 (յոթ հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

4.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Տավրոս թաղամասի 21-րդ փողոց, 37 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 29
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2023 թվականի N 824

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂ ԹԻՎ 1Գ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԵՆԶԱԼՑԱԿԱՅԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նաիրա Շարբաթի Աղաջանյանի, Սիրուշո Կամոյի Պետրոսյանի, Տիգրան Կամոյի Պետրոսյանի լիազորված անձ Սամվել Շարբաթի Աղաջանյանի 29.03.2023 թվականի թիվ 5094 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1900388 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման թիվ /85514/ քաղվածքը, 07.04.2022 թվականի թիվ 1014 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 775-20220405-90-5808563), 07.04.2022 թվականի թիվ 1015 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ:775-20220405-90-5808811), 11.10.2022 թվականի սեփականության իրավունքի թիվ 3640 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 775-20221011-105-6339937), 11.10.2022 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3641 վկայագիրը /նոտարական ակտի կոդ: 775-20221011-84-6339934/ 11.10.2022 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3642 վկայագիրը /նոտարական ակտի կոդ: 775-20221010-84-6337356/, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Բաղրամյան պող, թիվ 1գ հասցեում գտնվող բենզալցակայանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Մարշալ Բաղրամյան պողոտա, 1/2 բենզալցակայան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 29
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2023 թվականի N 825

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՋՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ 1/8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՄԱՆՈՒՇԱԿ ԴՈԼՄԱԶՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մանուշակ Միշիկի Դոլմազյանի 20.03.2023 թվականի թիվ 4393 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18052023-06-0058 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի ա) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Ջորավար Անդրանիկի փողոց 1/8 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող համայնքային սեփականություն հանդիսացող 13.2քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18052023-06-0058 վկայականի, կառուցապատման իրավունքով, 5 տարի ժամկետով տրամադրել Մանուշակ Դոլմազյանին՝ տաղավար կառուցելու նպատակով:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Մանուշակ Միշիկի Դոլմազյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր, 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 600 (վեց հարյուր) ՀՀ դրամ, իսկ համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 29
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2023 թվականի N 826

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Վանաձոր համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 26-ի թիվ 11 որոշումը, ղեկավարվելով«Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի 2.5 կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի 4-րդ և ՀՀ ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետով, ***որոշում եմ.***

Հաստատել Վանաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը.

1.Արման Ռոբերտի Բերնեցյան - հանձնաժողովի նախագահ, ՎՊՀ-ի դասախոս, Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարի խորհրդական, պատմաբան, ուսուցիչ.
2.Լեոնուհի Սերգեյի Գևորգյան - հանձնաժողովի քարտուղար, Վանաձորի համայնքապետարանի գործավար, մաթեմատիկոս, սոցիալական աշխատող.
3. Ռուդիկ Միշայի Վարոսյան - Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ, իրավաբան.
4. Լիլիթ Հովսեփյան- Վանաձոր համայնքի ավագանու անդամ.
5.Անի Արամի Ղազարյան - Լոռու մարզպետի աշխատակազմի Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետ, սոցիալական մանկավարժ.
6.Մարգարիտա Ստեփանի Շահվերդյան - «Առավոտ» ՀԿ-ի գործադիր տնօրեն, ՎՊՀ-ի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու, հոգեբան.
7.Գայանե Սեյրանի Քալանթարյան - Վանաձոր համայնքի ավագանու անդամ, «Լոռու մարզի հոգենյարդաբանական դիսպասեր» ՊՓԲԸ-ի բժիշկ, Լոռու մարզի գլխավոր հոգեբույժ.
8.Լուսինե Սամվելի Աքմաքչյան - ՄՄԾ Վանաձորի ՏԿ սոցիալական աշխատանքի և զբաղվածության ծրագրերի բաժնի պետ, տնօրենի պ/կ, պատմաբան, իրավագետ, սոցիալական աշխատող.
9.Աշխեն Ռազմիկի Առաքելյան - ՀՀ ՆԳՆ ՈԼՄՎ Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի ԱԳ և ԸԲԿ բաժանմունքի դպրոցական ավագ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 29
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մայիսի 2023 թվականի N 827

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 01-Ի ԹԻՎ 737 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 09-Ի ԹԻՎ 774 ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ԿԵՏԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՉԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դաշինք հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրի ղեկավար Նատալյա Լափաուրիի 23 մայիսի 2023 թվականի զեկուցագիրը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 2022 թվականի նոյեմբերի 01-ի <<Տաթև Սողոմոնի Քեշիշյանին աշխատանքի ընդունելու մասին>> թիվ 737 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

2. Որոշման 1-ին կետում «10 ամիս» բառերը փոխարինել «12 ամիս» բառերով:

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 2022 թվականի նոյեմբերի 09-ի <<Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 01-ը նոյեմբերի թիվ 737 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> թիվ 774 որոշման 2-րդ կետը:

4. 2023 թվականի հունիսի 01-ին կնքել համաձայնագիր 2022 թվականի նոյեմբերի 02-ին կնքված թիվ 15 աշխատանքային պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունիսի 01-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 31
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հունիսի 2023 թվականի N 828

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 71 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 18-ի «Վանաձոր համայնքի ղեկավարի 2023 թվականի գնումները հաստատելու մասին» թիվ 71 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. հունիսի 02
ք.Վանաձոր